



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

---

---

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**«Հեղաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հեղք»  
թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին**

ք.Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ

**Հարգելի պարոն Բալասանյան,**

Ի պատասխան Ձեր 2021 թվականի սեպտեմբերի 6-ի գրությամբ տրված հարցադրումների՝ ներկայացնում ենք հետևյալ տեղեկատվությունը.

Հարց 1. 2018-2021թթ.Արմավիրի մարզում ներդրում են իրականացրել 4 օտարերկրյա ընկերություններ՝ «Թանա պարտեզ» ՍՊԸ, «Ալ Աբդալայ գրուպ» ՍՊԸ, «Արմեն ֆոուտ ընդ Նատ» ՍՊԸ, «ԱԻ.Ս.Տ.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ:

Հարց 2. 2018-2021թթ. ընթացքում.

«Թանա պարտեզ» ՍՊԸ - ձեռք է բերվել Արտամետ համայնքում 495հա, Բաղրամյան (Բաղր.) համայնքում 104հա հողատարածք, որի վրա հիմնվել են պիստակի, ունաբի, ընկույզի այգիներ:

«Ալ Աբդալայ գրուպ» ՍՊԸ - ձեռք է բերվել Բաղրամյան (Բաղր.) համայնքում 1020 հա հողատարածք, որի վրա հիմնվել են ծիրանի, պիստակի այգիներ:

«Արմեն ֆոուտ ընդ Նատ» ՍՊԸ - ձեռք է բերվել Կողբավան համայնքում 1000հա հողատարածք, որի վրա սկսել են հիմնվել պիստակի այգիներ:

«ԱԻ.Ս.Տ.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ - ձեռք է բերվել Տավրիկ համայնքում 9.95 հա հողատարածք՝ ֆիզիկական անձանցից, արևային էներգիայի սալիկներ տեղակայելու նպատակով:

Ներդրման գումարի չափի մասին տեղեկատվությանը մարզպետարանը չի տիրապետում:

Հարց 3. 2018-2021թթ հողատարածքներ են օտարվել մարզի Բաղրամյան (Բաղր.), Կողբավան, Տավրիկ և Արտամետ համայնքներում, մասնավորապես՝

- Բաղրամյան համայնքում ձեռք է բերվել 1020հա, ֆիզիկական անձանցից, ծիրանի և պիստակի այգիներ հիմնելու նպատակով:

- Կողբավան համայնքում ձեռք է բերվել 1000հա հողատարածք, որի վրա սկսել են հիմնվել պիստակի այգիներ:

- Տավրիկ համայնքում ձեռք է բերվել 9.95հա, ֆիզիկական անձանցից, արևային էներգիայի սալիկներ տեղակայելու նպատակով:

- Արտամետ համայնքում ձեռք է բերվել 695հա, ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ պիստակի, ընկույզի և ունաբի այգիներ հիմնելու նպատակով:

Հարց 4. - Բաղրամյան համայնքում հողատարածքը ձեռք է բերել «Ալ Աբդուլայ գրուպ» ՍՊԸ-ն, Տավրիկ համայնքում՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, Կողբական համայնքում՝ «Արմեն ֆոուտ ընդ Նատ» ՍՊԸ-ն, Արտամետ համայնքում՝ «Թանա պարտեզ» ՍՊԸ-ն՝ առքուվաճառքի եղանակով:


Հարց 5. Բոլոր սուբյեկտները հողերը օգտագործում են ըստ հողօգտագործման նպատակային նշանակության: Տավրիկ համայնքում 9.95հա հողատարածքի նպատակային նշանակությունը փոփոխվել է 2020թ-ին:

Հարց 6. Վերը նշված 3 կազմակերպությունների («Թանա պարտեզ» ՍՊԸ, «Ալ Աբդուլայ գրուպ» ՍՊԸ, «Արմեն ֆոուտ ընդ Նատ» ՍՊԸ) մշակվող հողատարածությունների ջրամատակարարումն իրականացվում է «Շենիկ» ԶՕԸ-ի կողմից: Կազմակերպություններն իրենց միջոցներով կառուցել են ջրամբարներ, որոնց միջոցով իրականացնում են կաթիլային եղանակով ոռոգում, հետևաբար, նրանց կողմից հողօգտագործումը խնդիր չի առաջացնում մյուս հողօգտագործողների համար:

**Գլխավոր քարտուղար՝**

**Ա. Հովհաննիսյան**

10.09.2021



VERIFIED OCSP 10.09.2021 16:57:44 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Կատ.՝ Լ.Մուշեղյան  
Ա.Այվազյան  
Ա.Դարբինյան  
հեռ. 0237) 23850, 23205